

“ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ” ՊԵՏԱԿԱՆ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատություններում սովորողների ուսման և դաստիարակության աշխատանքների կազմակերպման համատեքստում հետևողականորեն իրականացվել են անչափահասների շրջանում հանցագործությունների կանխարգելմանը նպատակաուղղված բազմաթիվ և տարաբնույթ միջոցառումներ՝ ապահովելով համագործակցություն մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, համայնքների ղեկավարների, ուսումնական հաստատությունների տնօրենների ու մանկավարժների, ծնողների, իրավապահ մարմինների, երիտասարդական միջոցառումների կազմակերպման մարզային կենտրոնի աշխատանքներում:

Հանրակրթական հաստատություններում, ըստ միջոցառումների ծրագրի, դասղեկի ժամերի, դասարանական և ծնողական ժողովների, աշակերտական ինքնակառավարման մարմինների միջոցառումների, թեմատիկ ցերեկույթների, հանդիսությունների միջոցով քննարկվել կամ ներկայացվել են հասարակության համար վտանգավոր, մարդու իրավունքներն ու արժանապատվությունը ոտնահարող երևույթների անընդունելիությունը և այն դրականը, որն ապահովում է հասարակության առաջընթացը:

Կրթության, մշակույթի և սպորտի վարչության, ոստիկանության, մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի համատեղ աշխատանքների շնորհիվ իրավախախտ անչափահասների թիվը 2013թ. նվազել է. ոստիկանության մարզային վարչությունում հաշվառված է 28 իրավախախտ անչափահաս (նախորդ տարում՝ 39):